«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀՈՒՍԱԼԻՈՒԹՅՈՒՆ» ՎԱՐԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍՈՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-21/16»

ք. Երևան «08» մայիսի 2021թ.

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս գլխավոր տնօրեն Հայկ Հարությունյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Գրանթ Թորնթոն» փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս տնօրեն Արմեն Հովհաննիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող «Էլեկտրամատակարարման հուսալիություն» վարկային ծրագրի մասով ֆինանսական հաշվետվությունների աուդիտորական ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ Ծառայություն)՝ համաձայն սույն Պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է Պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը Պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է Պայմանագիրը: Կատարողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված Ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով Ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն Պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված Ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում Պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման

արձանագրությունը և Պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե Պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված Ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված Ծառայությունը համարվում է ընդունված և Պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն Պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության գինը կազմում է 1 224 000 (մեկ միլիոն երկու հարյուր քսանչորս հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հաստատման օրվանից հաշված 30 աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ Պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև Ծառայությունը սույն Պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այն չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար

հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն Պայմանագրով և սույն Պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ Պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով Պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում և (կամ) այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել Ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան Պայմանագրով ի սկզբանե Ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան Պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն Պայմանագիրը կազմված է 18 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ	«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Զ. Անդրանիկի 1	Հասցե՝ ք. Երևան, Սուրբ Գրիգոր Լուսավորչի փող., 9 շենք
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Մալաթիա մ/ճ	«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1150001172630300	Հ/Հ 1510045103850100
ՀՎՀՀ 01522459	ՀՎՀՀ 00040569
Գլխավոր տնօրեն	Տնօրեն
---------- Հ. Հարությունյան	---------- Ա. Հովհաննիսյան
/ստորագրություն/	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«08» 04 2021թ. կնքված
«ԲԷՅ-ԳՀԾՁԲ-21/16» ծածկագրով Պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*
Աուդիտորական ծառայություններ

ՀՀ դրամ

Ծառայության								
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	Տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	Ընդհանուր գինը /ՀՀ դրամ	Ընդհանուր քանակը	մատուցման	
							հասցեն	Ժամկետը**
1	79211160/3	ֆինանսական հաշվետվությունների աուդիտորական ծառայություններ	Ներկայացված է ստորև	դրամ	1 224 000	1	ք. Երևան, Զ.Անդրանիկի 1	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 30 օրացուցային օրվա ընթացքում, սակայն ոչ ուշ, քան 2021թ.-ի մայիսի 05-ը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Զ. Անդրանիկի 1
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Մալաթիա մ/ճ
Հ/Հ 1150001172630300
ՀՎՀՀ 01522459
Գլխավոր տնօրեն

Հ. Հարությունյան
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Սուրբ Գրիգոր Լուսավորչի փող., 9 շենք
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1510045103850100
ՀՎՀՀ 00040569
Տնօրեն

Ա. Հովհաննիսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Էլեկտրամատակարարման հուսալիության ծրագրի մասով 2020 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (ներառյալ արտոնյալ ժամանակահատվածը) աուդիտի

Ներածություն

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերությունը պետական ընկերություն է որի հիմնական գործառույթներն են էլեկտրաէներգիայի հաղորդումը, տարանցումը, էլեկտրահաղորդման գծերի և ենթակայանների սպասարկումը և շահագործումը:

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերությունը իրականացնում է «**Էլեկտրամատակարարման հուսալիություն**» ծրագիրը: Ծրագիրն ունի երկու բաղադրիչ՝ էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցի ամրապնդում և տեխնիկական օժանդակություն:

Ծրագրի նախապատրաստումը ֆինանսավորվել է ՀՀ Կառավարության խնդրանքով հատկացված 1 մլն. ԱՄՆ դոլար կանխավճարից: Ծրագրի նախապատրաստման կանխավճարով ֆինանսավորվել է էլեկտրահաղորդման գծի ընտրված հատվածի տեխնիկա-տնտեսական ուսումնասիրությունը, բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատումը, ներառյալ պաշտպանիչ մեխանիզմների փաստաթղթերի պատրաստումը, համակարգիչների և այլ հարակից սարքերի գնումը, հաշվապահական ծրագրի նորացումը և ծրագրի գործառնական ձեռնարկի (ԳՁ) կազմումը:

1-ին բաղադրիչ՝ էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցի ամրապնդում: Այս բաղադրիչով ֆինանսավորվել է Հրազդանի ջերմային էլետրակայանից մինչև Շինուհայրի ենթակայան 230 կմ երկարությամբ էլեկտրահաղորդման գծերի փոխարինման ներդրումները: Ներդրումները էլեկտրահաղորդման համակարգի թողունակության և հուսալիության բարձրացման միջոցով նպաստել են գծերի վթարային անջատումների և սպառողների հոսանքազրկումների հաճախականության նվազեցմանը:

Նշված բաղադրիչով ֆինանսավորվել է նաև Լալվար-Նոյեմբերյան էլեկտրահաղորդման գծերի փոխարինումը: Էլեկտրահաղորդման գծերի նշված հատվածի փոխարինումը ներառել է նոր հենասյուների տեղադրումը, մեկուսիչների փոխարինումը և ենթակառուցվածքների այլ կարևոր մասերի փոխարինում:

2-րդ բաղադրիչ՝ տեխնիկական օժանդակություն: Այս բաղադրիչով ֆինանսավորվել է՝ (ա) ԲԷՑ-ի աշխատակիցների ուսուցումը տեխնիկական վերահսկողության, պլանավորման, գնումների, ֆինանսական կառավարման և ծրագրերի կառավարման նրանց կարողությունները ամրապնդելու համար; (բ) բարձրավոլտ ցանցի պլանավորման և վերլուծության համակարգչային ծրագրերի ձեռքբերումը; (գ) ծրագրի իրականացման օժանդակությունը, ներառյալ տեխնիկական վերահսկողությունը և (դ) ԲԷՑ-ի ծրագրի իրականացման հետ կապված հավելյալ գործառնական ծախսերը:

Ծրագրի անվանումը	Ֆինանսավորման աղբյուրները և գումարը	Աուդիտի ենթակա ֆինանսական միջոցներ, 31 դեկտեմբերի 2020թ. (ԱՄՆ դոլար) (փաստացի վճարված գումար)
Էլեկտրամատակարարման հուսալիության ծրագիր	ՎՄՁԲ՝ 35,500,000.00 ԱՄՆ դոլար Համաֆինանսավորում՝ 8,500,000.00 ԱՄՆ դոլար	613,068.71

Նպատակը

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների (ԾՖՀ) աուդիտի նպատակն է հնարավորություն ընձեռել աուդիտորին կարծիք արտահայտել 2020 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (ներառյալ արտոնյալ ժամանակահատվածը) Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Ծրագրի հաշիվների մատյանը ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հենքն է և այն կազմվում է ծրագրի հետ կապված ֆինանսական գործարքների արտացոլման նպատակով:

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման պատասխանատվություն

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար, ներառյալ տեղեկատվության բավարար բացահայտումը, պատասխանատու է կառույցի/ծրագրի ղեկավարությունը: Սա ներառում է բավարար հաշվապահական գրառումների պահպանումը և ներքին հսկողության ապահովումը, հաշվապահական քաղաքականության ընտրությունն ու կիրառությունը և ծրագրի ակտիվների պահպանումը: Որպես աուդիտի գործընթացի մաս՝ աուդիտորները ղեկավարությունից պետք է ստանան աուդիտի իրականացման փաստի գրավոր հաստատում:

Շրջանակ

Աուդիտը կիրականացվի համաձայն Հաշվապահների միջազգային ֆեդերացիայի (ՀՄՖ) Աուդիտի և հավաստիացման ստանդարտների միջազգային խորհրդի հրապարակած Աուդիտի միջազգային ստանդարտների (ԱՄՍ): Այդ ստանդարտները պահանջում են, որպեսզի աուդիտորն աուդիտը պլանավորի և իրականացնի այնպես, որպեսզի ստացվի բավարար հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները զուրկ են նշանակալի անճշտություններից: Աուդիտի ընթացքում ընտրանքային եղանակով ուսումնասիրվում են ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարներն ու բացահայտումները հիմնավորող փաստերը: Աուդիտը ներառում է նաև օգտագործված հաշվապահական սկզբունքների և ղեկավարության կողմից կատարված գնահատականների գնահատում, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատում:

ամսաթիվ ստորագրություն

ԱՄՍ-ԱՄՍ

Հոդվածի 1.հոդված. Հարկային մարմինների ստորագրությունները հաստատելու լիազորությունները

1. Հարկային մարմինների ղեկավարները կարող են հարկային մարմնի ներսում ստեղծել հարկային մարմնի ստորագրությունները հաստատելու լիազորություններ ունեցող ստորաբաժանումներ, որոնք գործում են հարկային մարմնի ղեկավարի հրամանի հիման վրա:

2. Հարկային մարմնի ստորաբաժանումներ ստեղծելու մասին հրամանում նշվում են հարկային մարմնի ստորաբաժանումներ ստեղծելու հիմքերը, դրանց գործունեության ոլորտը, ինչպես նաև հարկային մարմնի ստորաբաժանումներ ստեղծելու ամսաթիվը:

3. Հարկային մարմնի ստորաբաժանումներ ստեղծելու մասին հրամանը հրապարակվում է հարկային մարմնի պաշտոնական կայքում:

4. Հարկային մարմնի ստորաբաժանումներ ստեղծելու մասին հրամանը ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող աշխատանքային հինգերորդ օրը:

5. Հարկային մարմնի ստորաբաժանումներ ստեղծելու մասին հրամանը հրապարակելուց հետո հարկային մարմնի ղեկավարը հարկային մարմնի ստորաբաժանումներ ստեղծելու մասին հրամանի մասին տեղեկացնում է հարկային մարմնի ստորաբաժանումներ ստեղծելու մասին հրամանի մասին

Համապատասխան ընդհանուր պայմանների և ֆինանսավորման համաձայնագրի փաստաթուղթ է հանդիսանում 2011թ. հունիսի 1-ով թվագրված ՀՀ եւ ՀԲ միջև ստորագրված Վարկային Համաձայնագիրը:

բ) Ծրագրի շրջանակում պետական համաֆինանսավորման գումարներն օգտագործվել են համաձայն ընդհանուր պայմանների, ֆինանսական համաձայնագրի և գումարների հատկացման նամակի և միայն ծրագրով նախատեսված գործողությունների համար:

գ) Ծրագրի շրջանակում ֆինանսավորված ապրանքների և ծառայությունների գնումները կատարվել են համաձայն ընդհանուր պայմանների, ֆինանսական համաձայնագրի և գումարների հատկացման նամակի,[1] ներառյալ Գնումների վերաբերյալ Համաշխարհային բանկի ուղեցույցները:[2]

դ) Ծրագրի բոլոր գործողությունների մասով պահպանվել են հիմնավորող փաստաթղթերը, հաշվապահական մուտքերն ու հաշիվները, ներառյալ այն ծախսերի համար, որոնց վերաբերյալ հաշվետվությունները ներկայացվել են Ամփոփ հաշվետվության կամ Ծախսային հաշվետվության միջոցով, ինչպես նաև Նպատակային հաշվի մասով (ՆՀ):

ե) Այն դեպքերում, երբ օգտագործվել են նպատակային հաշիվներ, ապա դրանց կառավարումը կատարվել է համաձայն ընդհանուր պայմանների, համապատասխան ֆինանսական համաձայնագրերի և գումարների հատկացման նամակի պահանջների:

զ) Դիտարկի ֆինանսական պայմանների կատարման համապատասխանությունը 2011թ. հունիսի 1-ին ՀՀ եւ ՀԲ միջև ստորագրված Վարկային Համաձայնագրի յուրաքանչյուր ֆինանսական պայմանների հետ:

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները պետք է ներառեն՝

ա) Ստացված գումարների ամփոփագիր՝ առանձնացված ձևով ներկայացնելով Համաշխարհային բանկից, ծրագրի շրջանակում այլ դոնորներից ստացված և պետական համաֆինանսավորման գումարները:

բ) Ծրագրի հիմնական բաղադրիչների և ծախսային կատեգորիաների մասով ծախսերի ամփոփագիր ընթացիկ տարվա և մինչ օրս կատարված ծախսերի մասով:

գ) Գումարների ստացման հայտերի ներկայացման համար օգտագործված Ամփոփ հաշվետվությունների կամ ծախսային հաշվետվությունների ամփոփագիր:

դ) Նպատակային հաշվի քաղվածքներ:

ե) Ծրագրի կուտակված գումարները, բանկային մնացորդները և ծրագրի մյուս ակտիվներն ու պարտավորությունները, եթե այդպիսին գոյություն ունեն, արտացոլող հաշվապահական հաշվեկշիռ:

---

[1] Կախված գնումների բարդության աստիճանից՝ աուդիտորը կարող է աուդիտի իրականացման ժամանակ տեխնիկական փորձագետներ ներգրավել: Նմանատիպ փորձագետներիներգրավման դեպքում աուդիտորը պետք է կատարի Աուդիտի միջազգային ստանդարտ 620-ի պահանջները՝ Փորձագետի ծառայությունների օգտագործում: Փորձագետի ներգրավման անհրաժեշտության մասին Փոխառուն և Համաշխարհային բանկը պետք է տեղեկացվեն հնարավորինս շուտ դրա վերաբերյալ փոխհաղորդ հանձնարարություն ձեռք բերելու և համապատասխան ցուցումներ ստանալու համար:

[2] Տես ՀԲ-ի վարկերից և ՄԶԶ փոխառություններից ֆինանսավորվող գնումների ուղեցույց, (համաձայն Վարկային համաձայնագրում կիրառվող հրատարակության) և Համաշխարհային բանկի վարկառուների կողմից խորհրդատուների ընտրության ուղեցույց (համաձայն Վարկային համաձայնագրում կիրառվող հրատարակության):

զ) Հաշվապահական քաղաքականության կարևոր դրույթները նկարագրող և այլ բացատրական տեղեկատվություն պարունակող ծանոթագրություններ[3]:

Ամփոփ հաշվետվություններ կամ Ծախսային հաշվետվություններ

Աուդիտորը պարտավոր է աուդիտի ենթարկել նպատակային հաշիվների համալրման նպատակով Համաշխարհային բանկ ներկայացված բոլոր ամփոփ և ծախսային հաշվետվությունները:

Պետք է ուսումնասիրի ծախսերի թույլատրելիությունը՝ հիմնվելով ֆինանսական համաձայնագրում սահմանված պայմանների և ծրագրի գնահատման փաստաթղթում ներկայացված դրանց մանրամասների վրա: Եթե գումարների ստացման հայտերում հայտնաբերվել են չթույլատրված ծախսեր, որոնք փոխհատուցվել են, ապա դրանց մասին հարկավոր է առանձին զեկուցել: Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները պետք է հավելված պարունակեն, որտեղ ներկայացված կլինի Ամփոփ հաշվետվությունների կամ ծախսային հաշվետվությունների հիման վրա պատրաստված գումարների ստացման հայտերի ցուցակ իրենց հատուկ համարներով և գումարներով:

Աուդիտորը պետք է մեծ ուշադրություն դարձնի նրան, թե արդյոք.

ա) Ամփոփ հաշվետվություններն ու Ծախսային հաշվետվությունները պատրաստվել են համաձայն համապատասխան ֆինանսական համաձայնագրերի:

բ) Բոլոր ծախսերը կատարվել են բացառապես ծրագրի նպատակների իրացման համար:

գ) Աուդիտի համար անհրաժեշտ տեղեկատվությունն ու պարզաբանումները ստացվել են:

դ) Աուդիտի համար անհրաժեշտ հիմնավորող գրանցումներն ու փաստաթղթերը պահպանվել են:

ե) Գումարների ստացման համապատասխան հայտերը հիմնավորելու համար հնարավոր է հիմնվել Ամփոփ հաշվետվությունների և ծախսային հաշվետվությունների վրա:

Նպատակային հաշիվներ

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների աուդիտ անցկացնելիս՝ աուդիտորը պարտավոր է ուսումնասիրել ծրագրի նպատակային հաշվի հետ կատարված գործառնությունները: Դրանք ներառում են ստացված ավանդները, կատարված վճարումները, տոկոսային եկամուտը և ժամանակահատվածի վերջի դրությամբ մնացորդների համապատասխանեցումը:

Աուդիտորը հատկապես պետք է ուշադրություն դարձնի Բանկի ընթացակարգերի հետ համապատասխանությանը և 2020թ. դեկտեմբերի 31-ով ավարտվող ժամանակահատվածի վերջում նպատակային հաշիվների մնացորդներին, ինչպես նաև գումարների հատկացման այս մեխանիզմի համար նախատեսված ներքին հսկողության մեխանիզմների բավարարությանը:

3 Բացատրական ծանոթագրությունները պետք է պարունակեն «Ծրագրի համար Համաշխարհային բանկից ստացված գումարների» և «Բանկի հատկացումների» համապատասխանեցում և ծրագրի նպատակային հաշվի շարժի ամփոփում

Աուդիտորական հաշվետվություններ

Աուդիտորը ծրագրի ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ պետք է աուդիտորական կարծիք ներկայացնի:

Բացի ծրագրի ֆինանսական հաշվետվությունների և կառույցի ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիքի ներկայացումից, աուդիտորը պետք է պատրաստի նաև ղեկավարությանն ուղղված նամակ, որում աուդիտորը պետք է.

ա) Ներկայացնի աուդիտի ընթացքում ուսումնասիրված հաշվապահական գրանցումների, համակարգերի և ներքին հսկողության մեխանիզմների վերաբերյալ իր մեկնաբանություններն ու դիտարկումները:

բ) Նույնականացնի համակարգերի և հսկողության մեխանիզմների թերություններն ու թույլ օղակները և կատարի դրանց բարելավման առաջարկություններ:

գ) Ներկայացնի ֆինանսական համաձայնագրի դրույթների խախտման դեպքերը:

դ) Ներկայացնի այն խնդիրները, որոնք ի հայտ են եկել աուդիտի ընթացքում և կարող են էական ազդեցություն ունենալ ծրագրի իրականացման վրա:

ե) Վարկառուի ուշադրությունը հրավիրի բոլոր մնացած այն խնդիրների վրա, որոնք աուդիտորի տեսանկյունից կարևոր են և

զ) Ղեկավարությանն ուղղված նամակում ներառի ղեկավարության դիտողությունները:

Ծրագրի ֆինանսական հաշվետվություններն, այդ թվում աուդիտորական եզրակացությունը եւ նամակ ղեկավարությանը, պետք է տրամադրեն «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերությանը ոչ ուշ քան 2021թ. մայիսի 5-ը: «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերությունը իրավական պարտավորություն ունի 2 օրինակ անհապաղ ներկայացնել ՀԲ:

Հրապարակում

Համաձայն Համաշխարհային բանկի (այսուհետ Բանկ) 01 հուլիսի 2010թ. «Տեղեկատվության հասանելիության» քաղաքականության, կապված Բանկի կողմից ֆինանսավորվող գործառնությունների հետ, որի համար բանակցությունների հրավեր է տրվել 01 հուլիսի 2010թ.-ին կամ դրանից հետո, բանկը պահանջում է, որ վարկառուն պատրաստի աուդիտի ենթարկվող ֆինանսական հաշվետվությունները և հասանելի է դարձնում հանրությանը որոշակի ժամանակահատվածում և Բանկի կողմից ընդունելի կարգով: Ի հավելումն, բացի այդ Բանկը վարկառուի ֆինանսական հաշվետվությունների պաշտոնապես ստանալուց հետո, այն դարձնում է հասանելի հանրությանը՝ համաձայն սույն քաղաքականությանը:

Հրապարակման համար Նամակ Ղեկավարությանը, հատուկ աուդիտ (այսինքն, որի էությունը ֆինանսական չէ) եւ աուդիտի չենթարկված ֆինանսական հաշվետվությունները (օր., միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ) չեն համարվում աուդիտի ենթարկված տարեկան ֆինանսական հաշվետվությունների սահմանման մաս:

Միայն բացառիկ դեպքերում Բանկը կարող է համաձայնել, այսինքն, այն ժամանակ, երբ աուդիտորի կողմից ստուգված տարեկան ֆինանսական հաշվետվությունները պարունակում են տեղեկատվություն, որը վերաբերում է սեփականությանը կամ առևտրային գաղտնիքի, որ վարկառուն կամ հատուկ նախագծի ընկերությունը կարող է զերծ մնալ տարեկան ֆինանսական

հաշվետվությունների հրապարակումից, սակայն պետք է ներկայացնի հրապարակման համար Համառոտ տարբերակ, որը Համաշխարհային բանկի կողմից ընդունելի է: Բացառությունները հաստատում է Համաշխարհային բանկի ղեկավարությունը:

Ընդհանուր

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և պատշաճ հրապարակման համար պատասխանատու է «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության ղեկավարությունը: Որպես աուդիտի գործընթացի մաս, աուդիտորը ղեկավարությունից կպահանջի գրավոր հաստատում աուդիտորին աուդիտի հետ կապված ներկայացումների համար:

Աուդիտորի համար պետք է առանց սահմանափակումների հասանելի լինի ամբողջ տեղեկատվությունը և աուդիտորին պետք է տրամադրվեն աուդիտի իրականացմանը նպաստող բոլոր պարզաբանումները, ներառյալ իրավական փաստաթղթերը, ծրագրի նախապատրաստման և վերահսկողության հաշվետվությունները, ուսումնասիրության և հետաքննական հաշվետվությունները, նամակագրությունը և վարկային հաշվի հետ կապված տեղեկատվությունը: Աուդիտորը կարող է նաև պահանջել Բանկային գրանցումներում արտացոլված գումարների հատկացման և մնացորդների վերաբերյալ գրավոր հաստատում: Աուդիտորին խորհուրդ է տրվում աուդիտի հետ կապված խնդիրների քննարկման համար հանդիպել նաև Համաշխարհային բանկի ծրագրի թիմին:

Խիստ ցանկալի է, որ աուդիտորը ծանոթանա ֆինանսական հաշվետվությունների ներկայացմանն ու աուդիտի պահանջներին վերաբերող Համաշխարհային բանկի ուղեցույցներին: Այդ ուղեցույցներն են.

- Ելակետային նյութեր Համաշխարհային բանկի ներդրումային ծրագրի շրջանակում պատրաստվող ֆինանսական կառավարման ձեռնարկների համար (մարտ, 2010թ.): RM 3 – Ֆինանսական հաշվետվություններ և աուդիտ:
- Գումարների տրամադրման ձեռնարկ Համաշխարհային բանկի հաճախորդների համար, փետրվար, 2017թ. (տեղադրված է Client Connection կայքում):
- ՎՀՄԲ Վարկերից և ՄՀԸ փոխառություններից ֆինանսավորվող գնումների ուղեցույց (համաձայն Վարկային համաձայնագրում կիրառվող հրատարակության), հունվար, 2011 թ. (վերանայված հուլիս, 2014 թ.):
- Համաշխարհային բանկի փոխառուների կողմից խորհրդատուների ընտրության ձեռնարկ (համաձայն Վարկային համաձայնագրում կիրառվող հրատարակության) հունվար, 2011 թ. (վերանայված հուլիս, 2014 թ.):

Աուդիտորը պետք է գիտակցի, որ Համաշխարհային բանկի ծրագրերի շրջանակում պատրաստված նյութերը ենթակա են Փոխառուի և/կամ Բանկի համապատասխան աշխատակիցների կողմից ուսումնասիրության:

Հիմնական մասնագետների որակավորման պահանջները

Անձնակազմի բոլոր անդամները պետք է ազատ կարդան, խոսեն և գրեն հայերեն և անգլերեն լեզուներով: Ռուսերեն լեզվի իմացությունը կհամարվի որպես առավելություն:

Պաշտոն	Ընդհանուր որակավորման և փորձի նվազագույն պահանջները	Նմանատիպ աշխատանքի փորձը
Թիմի ղեկավար	10 տարվա աշխատանքային փորձ	Աուդիտի իրականացնելու փորձ առնվազն 5 ծրագրերում որոնք ֆինանսավորված կլինեն Միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից
Աուդիտի պատասխանատու	4 տարվա աշխատանքային փորձ աուդիտի ոլորտում	Աուդիտի իրականացնելու փորձ առնվազն 3 ծրագրերում որոնք ֆինանսավորված կլինեն Միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից
Աուդիտոր	3 տարվա աշխատանքային փորձ աուդիտի ոլորտում	3 տարվա աշխատանքային փորձ որպես աուդիտոր առնվազն 3 ծրագրերում՝ համանման պաշտոնում
Աուդիտոր	3 տարվա աշխատանքային փորձ աուդիտի ոլորտում	3 տարվա աշխատանքային փորձ որպես աուդիտոր առնվազն 3 ծրագրերում՝ համանման պաշտոնում

Հաշվետվությաւններ ներկայացնելու պարտավորություններ

Խորհրդատուն պետք է տրամադրի Ծրագրի ֆինանսական հաշվետվություններն, այդ թվում աուդիտորական եզրակացությունը եւ նամակ ղեկավարությանը, ոչ ուշ քան 2021թ. մայիսի 05-ը, 3 օրինակով հայերեն և անգլերեն լեզուներով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Զ. Անդրանիկի 1
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Մալաթիա մ/ճ
Հ/Հ 1150001172630300
ՀՎՀՀ 01522459
Գլխավոր տնօրեն

Հ. Հարությունյան
/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Սուրբ Գրիգոր Լուսավորչի փող., 9 շենք
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1510045103850100
ՀՎՀՀ 00040569
Տնօրեն

Մ. Հովհաննիսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
«08» 04 2021թ. կնքված
«ԲԷՑ-ԳՀՇՁԲ-21/16» ծածկագրով Պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ.-ին՝ ըստ եռամսյակների, այդ թվում				
			1-ին եռամսյակ	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ	Ընդամենը
1	79211160/3	ֆինանսական հաշվետվությունների աուդիտորական ծառայություններ	-	-	1 224 000	1 224 000	1 224 000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Զ. Անդրանիկի 1
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Մալաթիա մ/ճ
Հ/Հ 1150001172630300
ՀՎՀՀ 01522459
Գլխավոր տնօրեն

Հ. Հարությունյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Սուրբ Գրիգոր Լուսավորչի փող., 9 շենք
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1510045103850100
ՀՎՀՀ 00040569
Տնօրեն

Ա. Հովհաննիսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
« 08 » 04 2021 թ. կնքված
«ԲԷՅ-ԳՀԾՁԲ-21/16» ծածկագրով Պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ Ծառայությունները՝

N	Մատուցված Ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ Պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ Պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«08» 04 2021 թ. կնքված
«ԲԷՅ-ԳՀԾՁԲ-21/16» ծածկագրով Պայմանագրի

ԱԿՏ N

Պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը Պայմանագրի համարը

գնման Պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված Ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն